ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ 01-57

«02» 04 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 29 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին N - 7Ն որոշումը:

Առդիր 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«29» մարտի 2021թ. թիվ 6-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 29-ի թիվ 3 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| ԱՐՄԵՆ ԳՅՈՋԱԼՅԱՆ | | | |
| ՍԵՐՈԲ ԴԻՇԼԱՆՅԱՆ | | | |
| ՆԻԿՈԼԱՅ ՏԵՐ- ԽԱՉԱՏՐՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ՕՀԱՆՅԱՆ | | | |
| ՄԱՅԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| ՌԱՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ԱՐՄԵՆ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ. Տ.

2021 թվականի«29» մարտի
գ. Ոսկեհատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի
ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 29-ի թիվ 3 նիստի օրակարգի հաստատում.

/ Զեկուցող Գ. Ներսիսյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

/ Զեկուցող Գ. Ներսիսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

« 29 » մարտի 2021 թ. թիվ7 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

1. Գյոզալյան Արմեն
2. Գալստյան Մայիս
3. Դիշլանյան Սերոբ
4. Խուդաբաշյան Արմեն
5. Հակոբյան Ռաֆիկ
6. Տեր- Խաչատրյան Նիկոլայ
7. Օհանյան Նորայր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2021 թվականի մարտի 29-ի

Ոսկեհատ համայնք

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29 -Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ N 7 - Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 29-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին N 7-Ն որոշման ընդունումը պայմանավորված է Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի, ինչպես նաև 83-րդ հոդվածի պահանջներով՝ միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 29-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին N 7-Ն ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29 -Ի
N 7-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Ոսկեհատ համայնքի 2020թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 22182.6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 20241.3 հազար դրամ կամ կատարվել է 91.3 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 8500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 7808.1 հազար դրամ կամ կատարվել է 91.9%-ով:

2, Գույքահարկի պլանով նախատեսված 13682.6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 12433.2 հազար դրամ կամ կատարվել է 90.9 %-ով:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով նախատեսված 290,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 405.0 հազար դրամ կամ կատարվել է 139.7%-ով:
այդ թվում

1. Տեղական տուրքերի գծով նախատեսված 290.0հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 405.0հազար դրամ կամ կատարվել է 139.7 %-ով:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ
Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 3480.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքա•րվել է 999.2 հազար դրամ կամ կատարվել է 28.7%-ով, այդ թվում՝
1. գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 90.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 110.0 հազար դրամ կամ կատարվել է 122.2%-ով:

2,տեղական վճարների գծով նախատեսված 3390.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 79.8 հազար դրամ կամ կատարվել է 2.4%-ով:
3,այլ եկամուտների գծով նախատեսված 0,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 809.4,0 հազար դրամ ;

4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից սպացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 57654.4 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 58986.0 հազար դրամ կամ կատարվել է 102.3%-ով:
Ոսկեհատ համայնքի 2020թ. վարչական բյուջեով նախատեսված 83607.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 80631.5 հազար դրամ կամ կատարվել է 96.4 %-ով:

Ոսկեհատ համայնքի 2020թ. բյուջեն ընդամենը նախատեսված 83607.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 80631.5 հազար դրամ կամ կատարվել է 96.4 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 25952.6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 21645.5 հազար դրամ կամ կատարվել է 83.4 %-ով:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1. Ոսկեհատ համայնքի 2020թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 47260,0հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 33286.4 հազար դրամ կամ կատարվել է 70.4 %-ով:

2.Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակար•ման 04բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 1100,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 555.7 հազար դրամ կամ կատարվել է 50.5 %-ով:

3.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2400,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2180,0 հազար դրամ կամ կատարվել է 90.8 %-ով:

4.Առողջապահություն (այլ դասերին չպատկանող) ծախսերի գործառնական դասակարգման 07բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 1500,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 0.0 հազար դրամ :

5.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 12100.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 4655.9 հազար դրամ կամ կատարվել է 38.5 %-ով:

6. Կրթություն ծախսերի գործառնական դասակարգման 09բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 15000.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 0.0 հազար դրամ :

7. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 4000,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 3995.0 հազար դրամ կամ կատարվել է 99.9 %-ով:

8.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդով նախատեսված 247.0հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

2020թ. բյուջեի վարչական բյուջեով նախատեսված 83607.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 44673.0 հազար դրամ կամ կատարվել է 53.4 %-ով:

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

Ոսկեհատ համայնքի 2020թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 0.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1199.5 հազար դրամ այդ թվում՝
1. համայնքի սեփականություն համարվող հողի օտարումից մուտքերի գծով 0.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1199.5 հազար դրամ

2020թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 71475.7 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 49341.6 հազար դրամ կամ կատարվել է 69.0 %-ով, այդ թվում՝

1. ա) տեղական ինքնակառավարում ՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 69475.7 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 50541.0 հազար դրամ կամ կատարվել է 72.8 %-ով:

2.Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակարգման 04բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2000,0 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել :

Ոսկեհատ համայնքի 2020թ. բյուջեի ծախսերը ընդամենը նախատեսված 155082.7 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 94014.6 հազար դրամ կամ կատարվել է 60.6 %-ով,

## ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ

Ոսկեհատ համայնքի բյուջեի տարեվերջի պակասորդը (դիֆիցիտը) նախատեսված 71475.7 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 58092.6 հազար դրամ: